

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 26/5

ք.Երևան

15 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Անուշ Օհանյանի ներկայացուցչի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Ա/Ձ Անուշ Օհանյանը մշտապես համարվել է շրջանառության հարկ վճարող: Ա/Ձ Անուշ Օհանյանի ներկայացուցչը հայտնում է, որ առողջական խնդիրների պատճառով սահմանված ժամկետում չի կարողացել ներկայացնել շրջանառության հարկի հայտարարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է հնարավորություն ընձեռել, որպեսզի Ա/Ձ Անուշ Օհանյանը գործունեությունը շարունակի իրականացնել շրջանառության հարկի դաշտում:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ա/Ձ Անուշ Օհանյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 10.01.2013թ.: Ա/Ձ Անուշ Օհանյանին 11.08.2016թ. ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Ա/Ձ Անուշ Օհանյանը 2016 և 2017թթ. ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող:

2017թ. ընթացքում Ա/Ձ Անուշ Օհանյանի իրացման շրջանառությունը կազմել է 4.570.051 դրամ:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհավ ձեռնարկատերերը և նույնիսկ (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե

հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Մինչև նույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Անուշ Օհանյանը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018թ. համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել Ա/Ձ Անուշ Օհանյանի ներկայացուցչի (ում վրա էր դրված հայտարարությունը ներկայացնելու պարտականությունը) առողջության վատթարացման հետևանքով բուժման մեջ գտնվելու հանգամանքով (առկա են համապատասխան ապացույցները), ուստի Հանձնաժողովը գտնում է, որ բողոքաբերին անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Անուշ Օհանյանի ներկայացուցչի դիմում-բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Անուշ Օհանյանի ներկայացուցչի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

